Հայցի ապահովման միջոցի մասով Դատարանն արձանագրում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 03.11.2023 թվականի որոշմամբ կիրառվել է հայցի ապահովում, մասնավորապես Դատարանը որոշել է՝ պարտավորեցնել ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ «ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲ ընկերությանը հանել գնումներին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակից՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը: Հայցը բավարարելու մասին վճռի կայացումից հետո հայցի ապահովման միջոցը դատարանի որոշմամբ կարող է վերացվել հայցի ապահովում պահանջած անձի միջնորդությամբ:

Հայցի բավարարման պայմաններում Դատարանը գտնում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 03.11.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պետք է պահպանել մինչև վճռի կատարումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 194-րդ հոդվածներով, 234.12-րդ հոդվածի 1-ին մասով՝ Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ «ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ»-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 16.08.2023 թվականին ընդունված որոշման դեմ, բավարարել:

2. Վերացնել ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի 16.08.2023 թվականի՝ «ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումը:

3. ՀՀ ներքին գործերի նախարարությունից հօգուտ «ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲ ընկերության բռնագանձել 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

4. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

5. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 03.11.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև վճռի կատարումը:

6. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**